ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գ. Շիրակամուտ

N°—Ե -03/253

«25» 10. 2021թ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաչատրյան

Ներկայացնում եմ Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 29-Ա , 30-Ա , 31-Ն, 32-Ա և 33-Ա որոշումները:

Առդիր 8 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,,20'' հոկտեմբերի 2021 թվականի N29-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20 -Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2021թ. հոկտեմբերի 20 -ի հերթական նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1.Շիրակամուտ համայնքի ավագանու 2021թ. հոկտեմբերի 20-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Շիրակամուտ համայնքի 2021 թվականի բյուջեի III-րդ եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին:
3.Շիրակամուտ համայնքի 2021թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին
4.Համայնքային սեփականության գույքն օտարելու համաձայնություն տալու մասին
5. Շիրակամուտ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Մազմանյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,, 20'' հոկտեմբերի 2021 թվականի N30-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ III-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի՝ 2021 թվականի բյուջեի III-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին ներկայացրած հաղորդումը ,Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է .

1.Ընդունել ի գիտություն Շիրակամուտ համայնքի 2021 թվականի բյուջեի III-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Մազմանյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հավելված

Շիրակամու համայնքի ավագանու
20-ը հոկտեմբերի 2021թ. N30-Ա որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Շիրակամուտ համայնքի 2021թ. Բյուջեն 3-րդ եռամսյակի կտրվածքով կատարվել է

ա/եկամուտների գծով 93.98 %-ով, նախատեսված 54125.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 50870.8 հազար դրամ:

Սեփական եկամուտները /հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ հիմնական միջոցների իրացումից/ նախատեսված 9903.7 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 6789.5 հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 68.55 %-ով: Պաշտոնական դրամաշնորհների գծով /ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ/ նախատեսված 44221.3 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 44081,3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99.68 %:

բ/ Ծախսերի գծով կատարվել է 87.81 %- ով նախատեսված 54125.0 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 47527.6 հազար դրամ:

1.ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Վարչական բյուջեի եկամուտները 9 ամսվա համար նախատեսված 54125.0 հազար դրամի դիմաց կազմել են 50870.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 93.98 %:

1.1 Հողի հարկ

Հողի հարկի գծով 9 ամսվա համար նախատեսված 3733.7 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 1837.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 49.22%:

1.2. Գույքահարկ

Գույքահարկի գծով 9 ամսվա համար նախատեսված 2925.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2465.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 84.29%:

1.3. Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով 9 ամսվա համար նախատեսված 280.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 213.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 76.35%:

1.4. Այլ եկամուտներ

Այլ եկամուտների գծով 9 ամսվա համար նախատեսված 2965.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2272.1 հազար դրամ կամ կատարողականը կազմել 76.63%:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումներ՝ 3290,2:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Վարչական բյուջեի ծախսերը 6 ամսվա համար նախատեսված 54125.0 հազար դրամի դիմաց կատարվել է 47527.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 87.81%:

Ըստ գործառնական դասակարգման և ծրագրերի ծախսերը կատարվել են հետևյալ կերպ՝

/Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 90.22%,

/Տնտեսական հարաբերությունների գծով՝ 64.55%,

/Շրջակա միջավայրի պահպանություն՝ 91.0%,

/Կոմունալ տնտեսություն՝ 68.55%,

/Կրթություն՝ 86.4%,

/Սոցիալական պաշտպանություն՝ 65.45%,

3. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Ֆոնդային բյուջեով 9 ամսվա համար նախատեսված ծախսերը կատարվելեն 88.7% - ով:
Տնտեսական հարաբերություններով մուտքագրվել է 664.8 հազար դրամ:

Շիրակամուտ համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հաշվապահ՝ Ա. Ժամակոչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,, 20" հոկտեմբերի 2021 թվականի N31 -Ն

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Շիրակամուտ համայնքի 2021թվականի տարեկան բյուջեում կատարել փոփոխություններ բյուջեի փողոցների պահպանման և շահագործման 04.05.01 դասակարգման 5113 հոդվածից 3280000 դրամ տեղափոխել արտաքին լուսավորության ցանցի շահագործման 06.04.01 դասակարգման 5112 հոդվածին՝ համայնքի կողմից <<ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի թիվ 8,23,24,25 փողոցների լուսավորության ցանցի կառուցում>> սուբվենցիոն ծրագրի մասնաբաժնի ներդրման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Մազմանյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,, 20'' հոկտեմբերի 2021 թվականի N 32-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին''ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 35-րդ հոդվածի 18-րդ կետերով սահմանված դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և գույքի գնահատող ,,Մար-Մոս''ՍՊԸ տնօրեն Ահարոն Մակարյանի հաշվետվությունը ,Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է .

1. Համաձայնություն տալ Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող 2000թ. արտադրության ԳԱԶ -3110 մակնիշի մարդատար ավտոմեքենան աճուրդով օտարելու Շիրակամուտ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Գույքի մեկնարկային գին սահմանել գույքի գնահատող ,,Մար-Մոս'' ՍՊԸ տնօրեն Ահարոն Մակարյանի կողմից գնահատված 370000 ՀՀ դրամ գինը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Մազմանյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,,20 '' հոկտեմբերի 2021 թվականի N33 -Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի ,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին'' թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և
Շիրակամուտ համայնքի 2021թ. բյուջեի 10.7.1 դասակարգման 4729 հոդվածից հատկացնել սոցիալական օգնություն երեսուն հազարական դրամ համաձայն կից հավելվածի:
3.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/3 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Մազմանյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի ավագանու
2021 թվականի հոկտեմբերի 20-ի N33-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Պետրոսյան Ջուլիետա Վ. - երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/
2. Մարտիրոսյան Ալվարդ Ս. - երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/
3.Թադևոսյան Ալֆերիդա Գ. - երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/
4.Նալբանդյան Ռոբերտ Մ. - երեսուն հազար դրամ /սոց.օգնություն/

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ԵՐԱՆՈՍՅԱՆ